

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ

Գոհար ԱՂԱՋԱՆՅԱՆ  
<ՊՏՀ ասպիրանտ

Բանալի բառեր. համայնքների բյուջե, ծախսերի կառավարման համակարգ,  
եկամուտների կանխատեսում, լիազորությունների ապակենուրոնացում

**Ներածություն:** Տեղական ինքնակառավարման մարմինները ամբողջ աշխարհում փորձում են իրենց վերապահված լիազորությունները առավել արդյունավետությամբ կատարել՝ օգտագործելով որքան հնարավոր է քիչ \$ինանսական ռեսուրսները: Չնայած նրան, որ տարբեր երկրներում ՏԻՄ-երն ունեն տեղական ծառայությունների իրականացման տարբեր լիազորություններ, այնուամենայնիվ, ներկայում նրանց մեծամասնությունը բախվում է քաղաքային ծառայությունների նկատմամբ պահանջարկի մեծացմանը՝ կապված ուրբանիզացման մակարդակի բարձրացման հետ: ՏԻՄ-երի՝ քաղաքային ծառայությունների մատուցման կարողությունը խիստ սահմանափակվում է ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով, ուստի, ՏԻՄ-երը կանգնում են խնդրի առաջ՝ ինչպես կառավարել ֆինանսական ռեսուրսները առավել արդյունավետ:

**Գրականության ակնարկ:** Տեղական ինքնակառավարման զարգացման և համայնքների ֆինանսական ապահովվածության, ծախսերի կառավարման և ծախսային քաղաքականության արդյունավետ իրականացման հարցերի շուրջ գիտական աշխատանքներ են իրականացրել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի տեսարանները: Է. Օրյանը իր աշխատություններում ներկայացրել է համայնքների բյուջետային գործընթացը. հիմնավորել է ծրագրային բյուջետավորման կարևորությունը՝ ծրագիր-բյուջե և ծախսեր-արդյունք կապերի անհրաժեշտությունը, Դ. Թումանյանը << տեղական ինքնակառավարման համակարգին վերաբերող բազմաթիվ աշխատությունների, մեթոդաբանությունների և ուսումնական նյութերի հեղինակ է. Ներկայացրել է համայնքի կապիտալ զարգացման ծրագրի էռությունը, մշակման քայլերը, կապիտալ պլանավորման և բյուջետային քաղաքականության մշակման անհրաժեշտությունը՝ կարևորելով ծախսերի դասակարգումը և ճիշտ ծախսային քաղաքականության իրականացումը՝ հնարավորություն տալով համայնքներին

օգտագործել այն համայնքի զարգացման ծրագրի մշակման ժամանակ, Վ. Շահբայյանը իրականացրել է համայնքների բյուջետային եկամուտների և ծախսերի, ՏԻՄ-երի գործառույթների իրականացման արդյունավետության վերլուծություններ, Ի. Ժուկը և Վ. Կրավչենկոն ներկայացրել են միջազգային պրակտիկայում համայնքների ֆինանսական հիմքերը, բյուջետային գործնթացը, դրա արդյունավետության բարձրացման ուղիները և տեղայնացման հնարավորությունները, Օ. Ռոյը իր աշխատությունում ներկայացրել է պետական մարմինների կողմից ՏԻՄ-երին գործառույթների պատվիրակման անհրաժեշտությունը՝ հետամուտ լինելով ծախսերի իրականացման արդյունավետության բարձրացմանը, Լ. Մորելը և Մ. Կոպանին հիմնավորել են տեղական ծախսերի ճիշտ կառուցվածքի կարևորությունը, ներկայացրել են ըստ փուլերի ծախսային քաղաքականության իրականացումը, ծախսերի կառավարման հայեցակարգի անհրաժեշտությունը և այլն:

**Մեթոդաբանություն:** Հոդվածի համար տեսական հիմք են հանդիսացել հայկական և օտարերկրյա գիտական, փորձագիտական և ուսումնամեթոդական աշխատությունները, համաշխարհային բանկի խմբի կողմից թողարկած ձեռնարկները: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ՎԿ-ի, ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ ԿԲ-ի և համապատասխան պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները, նաև բյուջետային և տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ և իրավական այլ ակտեր: Վերլուծության ընթացքում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, գրաֆիկական, համեմատական, ինչպես նաև ուգրեսիոն վերլուծության մեթոդներ:

**Վերլուծություն:** Զարգացող երկների մեծ մասին, այդ թվում՝ Հայաստանին, բնորոշ են համայնքային ծախսերի կառավարման այնպիսի թերություններ, ինչպիսիք են ֆինանսական ռեսուրսների կամայական բաշխումը և ծախսերի իրականացման ոչ արդյունավետ կառավարումը: Ծախսերի արդյունավետ կառավարման համակարգը գործիք է, որը վստահեցնում է ՏԻՄ-երին, որ բյուջեի եկամուտները իրական են, իսկ ծախսերը համահունչ են բյուջետային եկամուտների կանխատեսումներին: Սովորաբար ծախսերի կառավարման համակարգը ներառում է այնպիսի գործիքներ, ինչպիսիք են ռեսուրսների և ծախսերի պլանավորումը, ռեսուրսների բաշխումը համապատասխան մարմինների միջև, ծախսերի իրականացումը և դրա նկատմամբ

Վերահսկողությունը: Հայաստանում համայնքային ծախսերի կառավարման հստակ հայեցակարգ գոյություն չունի: Ծախսերի կառավարումը իրականացվում է բյուջետային գործընթացի շրջանակում, որը կարգավորվում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» <<օրենքով, որի համաձայն համայնքները իրենց ծախսերի հաշվարկման ժամանակ կարող են օգտվել կառավարության կամ նրա լիազորած պետական կառավարման մարմնի կողմից սահմանված նորմերից և նորմատիվներից, մեթոդական ուղեցույցներից, որոնք կրում են խորհրդատվական բնույթ, բացառությամբ պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի և պետական բյուջեից տրամադրվող այլ նպատակային ծախսերի:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ համայնքները պետք է ձգտեն հավասարակշոված բյուջե ձևավորել: Հավասարակշոված բյուջեն բաղկացած է 3 մասից՝ ընթացիկ հաշվեկշիռ, կապիտալ հաշվեկշիռ, ընդհանուր հաշվեկշիռ: Արդյունավետ կառավարում իրականացնող ՏԻՄ-երը, նույնիսկ զարգացող երկրներում, իրենց բյուջեն ձևավորում են վերոնշյալ 3 հաշվեկշիռների հիման վրա: << համայնքների բյուջեն բաղկացած է համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերից, իսկ համաձայն << բյուջետային համակարգի մասին օրենքի՝ բյուջետային տարվա համար բյուջեներով նախատեսված ելքերը չեն կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեներով նախատեսված հաշվարկային դրամական մուտքերը (<< օրենքը «ՀՀ բյուջետային համակարգի մասին», 1997թ., հոդված 12), ինչը հնարավորություն է տալիս ձևավորել հավասարակշոված բյուջե:

Անցումային և զարգացող տնտեսությամբ հարյուրավոր համայնքներ ունենում են բյուջետային դեֆիցիտ՝ պայմանավորված ֆինանսավական ճգնաժամով, եկամուտների ոչ արդյունավետ կանխատեսմամբ, եկամուտների և ծախսերի անհամապատասխանությամբ, բյուջետային «փափուկ» սահմանափակումներով կամ ծախսերի նկատմամբ ոչ արդյունավետ վերահսկողությամբ: Անկախ բյուջետային դեֆիցիտի առաջացման պատճառներից՝ ՏԻՄ-երը պետք է մշտադիտարկեն իրավիճակը և համապատասխան քայլեր ձեռնարկեն: Ծախսերի կառավարման համակարգում կարևոր է նաև ֆինանսական ապակենտրոնացման աստիճանը: Ֆինանսավական ապակենտրոնացման աստիճանը սովորաբար որոշում է ծախսերի կառուցվածքը ըստ գործառույթների կամ ծառայությունների ոլորտի: Սկանդինավյան երկրները աչքի են ըն-

## ԱՅԼՌՍՏՐԱՆՔ ԳԻՏԱԿԱԾ ԻԱՆԴԵԽ

կընում գործառույթների ապակենտրոնացմամբ, որտեղ պետական կառավարման կենտրոնական մարմինների լիազորությունների մեծ մասը պատվիրակված է ՏԻՄ-երին: Կենտրոնական եվրոպայի, ինչպես նաև զարգացող երկրների մեծ մասին բնորոշ է լիազորությունների կենտրոնացումը պետական կառավարման մարմինների ձեռքում: Վերոնշյալ երկրների մեծամասնության համայնքի բյուջեի ծախսերը բավականին փոքր տոկոս են կազմում հանրային ծախսերում. համայնքի ծախսերի գերակշիռ մեծամասնությունն ուղղված է վարչական գործառույթների իրականացմանը և ընդամենը մի փոքր մաս՝ սոցիալական և քաղաքային գործառույթներին (The World Bank: Morell and Koranyi, 2014, p.218): Ֆրանսիայի տեղական բյուջեի ծախսերում նույնպես գերակշում են վարչական ծախսերը, ինչպես նաև ուստիկանության, դատահրավական գործընթացին և հակահրդեհային պաշտպանությանն ուղղված ծախսերը (Рой, 2006, ստ. 98): «Համայնքի բնակչությունը, ենելով այն հանգամանքից, որ ՏԻՄ-երը համայնքային համապատասխան ծառայություններ չեն մատուցում, հրաժարվում են վճարել ավելի բարձր համայնքային հարկեր, քանի որ դրանք ուղղվելու են ոչ թե սոցիալական ծառայությունների մատուցմանը, այլ վարչական աշխատանքների իրականացմանը: Այս պարագայում կարևորվում է գործառույթների ապակենտրոնացումը, ծախսերի կառուցվածքը, ինչպես նաև ծախսերի իրականացման նկատմամբ վերահսկողությունը:

Հայաստանում համայնքային ծախսերի տեսակարար կշիռը հանրային ծախսերում 2010-2020թթ. տատանվել է 8-9 տոկոսի սահմաններում (վերլուծությունն իրականացրել է հեղինակը <<ՏԿԵՆ 2010-2020թթ. «Համայնքների բյուջետային ծախսերի վերաբերյալ» հաշվետվությունների և <<ԱՎԿ տվյալների հիման վրա>): Ծախսերի արդյունավետ կառավարման համակարգը պետք է ներառի հետևյալ երեք բաղկացուցիչները.

• Զափորոշիչներ: Ապագա ծախսերը պլանավորելիս անհրաժեշտ է սահմանել հստակ չափորոշիչներ, ինչը հնարավորություն կտա վերահսկել փաստացի արդյունքը:

• Ծախսերի վերահսկողություն: Փաստացի կատարված ծախսերը պետք է համապատասխանեն բյուջեին և պլաններին:


• Գնահատում: Ծախսերի կատարման ողջ գործընթացը պետք է մշտառիտարկվի՝ համոզվելու համար, որ դրանք համապատասխանում են համաձայնեցված պլաններին:

## ԱՅԼՇՏՐԱՍԹ գիտական համդես

Ծախսերի կառավարման համակարգի կարևորագույն նպատակն է ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Վերոնշյալ նըպատակին հասնելու համար ՏԻՄ-երը պետք է նպաստեն հետևյալ երեք փոխկապակցված արդյունքների ձեռքբերմանը.

- Ֆիսկալ կարգապահություն. փաստացի ծախսերի և փաստացի եկամուտների համապատասխանության ապահովում,
- Ռեսուրսների բաշխման արդյունավետություն. բյուջեի եկամուտների արդյունավետ բաշխում համայնքի համար ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրեի միջև,
- Գործառնական արդյունավետություն. համայնքային ծառայությունների տրամադրում ողջամիտ որակով և արժեքով:

Ծախսերի արդյունավետ կառավարումը հիմնված է եկամուտների ճշգրիտ կանխատեսման վրա: Պետք է նկատել, որ եկամուտների կանխատեսումը բավականին բարդ գործընթաց է, և ճշգրտորեն կանխատեսել բյուջեի յուրաքանչյուր եկամուտ՝ գրեթե անհնար: << համայնքների եկամուտների կատարման տոկոսի (նախորդ տարվա համեմատ) և ծախսերի կատարման տոկոսի կոռելացիոն դաշտն ունի հետևյալ տեսքը.



**Գծապատկեր 1.** << համայնքների ծախսերի կատարման %-ի և եկամուտների կատարման %-ի կոռելացիոն դաշտը

Դժվար չէ նկատել, որ եկամուտների կատարման տոկոսի և ծախսերի կատարման տոկոսի միջև գոյություն ունի ուղիղ գծային կախվածություն: Գը-ձային ռեգրեսիոն հավասարումն ունի հետևյալ տեսքը.

$$y_{\delta} = 1.2904x_{\text{հլ.}} - 35.557$$

Եթ-ն համայնքների ծախսերի կատարման տոկոսն է,

Խեկ.-ը՝ Եկամուտների կատարման տոկոսը:

Հավասարումը ցույց է տալիս համայնքների Եկամուտների կատարման տոկոսի ազդեցությունը ծախսերի կատարման տոկոսի վրա: Ոեգրեսիայի գործակիցը 1.2904 է, ինչը ցույց է տալիս, որ Եկամուտների կատարման տոկոսի 1 միավորով փոփոխությունը հանգեցնում է ծախսերի կատարման տոկոսի միջինում 1.29-ով փոփոխության: Մոդելի դետերմիանացիայի գործակիցը ստանում էնք՝  $R^2 = 0.887$ , ինչը նշանակում է, որ 88.7% դեպքերում Եկամուտների կատարման տոկոսի փոփոխությունը հանգեցնում է ծախսերի կատարման տոկոսի փոփոխության: F վստահելիության մակարդակը (significance F) ցույց է տալիս, որ մոդելը վստահելի է: Ծախսերի կառավարումը պետք է դիտարկել որպես անընդհատ կրկնվող գործողությունների հաջորդականություն, որը ներառում է քաղաքականության վերանայումը, պլանների մշակումը և փոփոխումը, ուսուրսների բաշխումը, պլանների իրականացումը և ծախսերի վերահսկողությունը, ծախսերի իրականացման առողջությունը և գնահատումը (The World Bank: Morell and Kopanyi, 2014, p.221):

**Քաղաքականություն:** Պարբերաշրջանը սկսում է քաղաքականությունից, որը ՏԻՄ-երն իրականացնում են իրենց համայնքներում: Գործընթացը սկսելու համար ՏԻՄ-երը պետք է վերանայեն ընթացիկ քաղաքականությունը. արդյո՞ք այն դեռ արդիական է, և բոլոր շահառուների հետ մշակեն համայնքի համար նոր քաղաքականություն:

**Պլանավորում:** ՏԻՄ-երի կողմից քաղաքականության և ռազմավարության հաստատումից հետո, անհրաժեշտ է մշակել յուրաքանչյուր բաժնի պլանը: Արդյունավետ պլանները կազմվում են նախապես մշակված չափորոշիչների հիման վրա, որոնք փաստացի արդյունքները դարձնում են համադրելի: Պլանները հնարավորություն են տալիս ՏԻՄ-երին համապատասխան գործողություններ կատարել այն դեպքերում, եթե փաստացի Եկամուտները կամ ծախսերը շեղվել են նախնական պլաններից: Այս փուլում կարևոր է նաև կապիտալ զարգացման ծրագրերի մշակումը: Կապիտալ զարգացման ծրագրը բազմամյա կանխատեսման և պլանավորման միջոց է, որն օգտագործում են ՏԻՄ-երը՝ որոշելու համայնքին անհրաժեշտ ոլորտային կապիտալ ծրագրերն ու կապիտալ գնումները, դրանց կատարման ծախսերը և համակարգելու ներդրումների ֆինանսավորման աղբյուրները, ծախսերի կատարման համամա-

նություններն ու ժամանակի սահմաններն այնպես, որ հնարավորինս մեծացվի քաղաքացիներին հասանելի օգուտները (Թումանյան, 2010թ., էջ 43):

**ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱԺԽՈՒՄ:** Հաջորդ փուլը ռեսուրսների բաշխումն է, որն անհրաժեշտ է իրականացնելու մշակված քաղաքականությունը և պլանները: Այս փուլում վերանայվում են եկամուտների աղբյուրները և իրատեսական բյուջետային եկամուտները համեմատվում են առաջիկա ծախսերի հետ: Պլանավորման այս գործընթացը պարբերական բնույթ ունի. ծախսերը կարող են լինել իրատեսական եկամուտներից ավելի, ուստի գործընթացը կշարունակվի այնքան՝ մինչև համաձայնեցված պլաններով նախատեսված ծախսերը ճշգրտվեն և համապատասխանեցվեն հավաքագրվող եկամուտներին: << համայնքների բյուջեներում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամների առաջարկությամբ: Համայնքի բյուջեի կատարման ընթացքում վերաբաշխումներ կարող են կատարել նաև համայնքի ղեկավարը, որոնց հանրագումարը բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանված չափաքանակները (Մովսիսյան, Շահրազյան, 2012թ., էջ 18):

**Ծախսերի հսկողություն:** Համաձայնեցված ռազմավարական քաղաքականության իրականացման համար պլանները մշակելուց և ամբողջությամբ ֆինանսավորելուց հետո ՏԻՄ-երը իրականացնում են ինչպես ծախսերի, այնպես էլ եկամուտների մշտադիտարկում: Հսկողությունն իրականացվում է տեղական ինքնակառավարման բոլոր մակարդակներում:

**Հաշվառում և մոնիթորինգ:** Այս փուլում ուսումնասիրվում է բյուջեի յուրաքանչյուր ծախսը՝ ապահովելով դրանց կիրառումը սահմանված կոնկրետ գործունեության և ոլորտի համար: << համայնքների բյուջեների կատարման սպասարկումն իրականացվում է << ֆինանսների նախարարության Կենտրոնական գանձապետարանի տարածքային գանձապետական բաժանմունքների միջոցով, որտեղ յուրաքանչյուր համայնք ունի իր առանձին բյուջետային հաշվի համարը: Տարածքային գանձապետական բաժանմունքները բյուջեի մուտքերի և ելքերի մասին համայնքի ղեկավարին ներկայացնում են ամենօրյա տեղեկություններ (Մովսիսյան, Շահրազյան, 2012թ., էջ 18):

**Գնահակում և առողիք:** Ծախսերի կառավարման վերջին փուլը սահմանված պլաններով ձեռք բերված արդյունքների գնահատումն ու առողիտն է՝ հասկանալու համար՝ արդյո՞ք ձեռք բերված արդյունքները համապատասխանում են պլաններով սահմանված չափանիշներին, այսինքն՝ կատարվում է իրականացված ծրագրերի և կատարված աշխատանքների վերլուծություն և գնահատում: Գնահատման իրականացման արդյունքում համայնքի բոլոր շահառուները կարևոր տեղեկատվություն են ստանում, որը հաջորդ տարի պետք է օգտագործվի համայնքային քաղաքականության վերանայման ընթացքում:

Ծրագրերի վերլուծության և գնահատման խնդիրը բյուջետային ծրագրերի իրականացման գնահատումն է, որի նպատակն է ծրագիր-բյուջե և ծախսեր-արդյունք կապերի պարզաբանումը՝ բյուջեի միջոցները արդյո՞ք ծախսվել են համաձայն ծրագրերի և այդ ծախսերի արդյունքում ի՞նչ է իրականում ստացվել (Օրոյան, 2000թ., էջ 162):

Կարող է հարց առաջանալ՝ որտեղի՞ց պետք է սկսվի պարբերաշրջանը. յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման մարմնի կարևոր նպատակներից է համայնքի բնակչներին մատուցել այնպիսի ծառայություններ, որոնց նկատմամբ նրանք պահանջարկ ունեն և պատրաստակամ են վճարել՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսքով: Այս ամենը իրականացվում է քաղաքականության մշակման և վերանայման ընթացքում, հետևաբար, քաղաքականության շրջանակը այն «վայրն» է, որտեղ պլանավորման և ծախսերի կառավարման պարբերաշրջանը սկսվում և ավարտվում է:

**Եղրակացություններ:** Մի շարք ոլորտներում ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման ֆինանսավորման չափը շատ փոքր մաս է կազմում: Այսպիսի ոլորտներում համայնքները կամ չունեն պարտադիր կամ պատվիրակված լիազորություններ, կամ դրանք մասամբ են ֆինանսավորվում, ինչի հիմնական պատճառը առաջին հերթին ֆինանսական միջոցների սղությունն է: Այն ոլորտներում, որտեղ ՏԻՄ-երը կարող են առավել արդյունավետ իրականացնել այդ գործառույթները, պետական կառավարման մարմինները պետք է պատվիրակեն դրանք ՏԻՄ-երին՝ պատվիրակաված լիազորությունների հետ մեկտեղ տրամադրելով նաև համապատասխան ֆինանսական միջոցները:

Համայնքներում ծախսերի կառավարման համակարգը ներդնելու ճանապարհին հաջորդը խնդիրը եկամուտների կանխատեսումն է. հոդվածում իրականացված ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տալիս եկամուտների և ծախսերի կատարման ուղիղ գծային կապվածությունը, ինչը նշանակում է՝ որքան արդյունավետ են կանխատեսում և պլանավորում եկամուտները, այնքան արդյունավետ է իրականացվում ծախսային քաղաքականությունը:

Զարգացած երկրներում բյուջեների եկամուտների կանխատեսման գործընթացին իրենց մասնակցությունն են ցուցաբերում մի շարք ինստիտուտներ՝ կիրառելով տարբեր մեթոդներ, ինչը հնարավորություն է տալիս կրճատել եկամուտների կանխատեսման սխալի մեծությունը՝ բարձրացնելով բյուջեի եկամուտների կանխատեսման հավաստիության աստիճանը:

Կանխատեսումների առավել արդյունավետ իրականացման համար կարելի է օգտվել միջազգային պրակտիկայում տարածված այն եղանակից, ըստ որոնց համայնքի բյուջեի եկամուտների և դրամաշնորհների մասին տեղեկատվությունն է տրամադրվում համայնքներին, մասնավորապես կանխատեսվող դրամաշնորհների գումարների և կանխատեսվող այն օրենսդրական փոփոխությունների մասին, որոնք կարող են առաջացնել համայնքի բյուջեի եկամուտների փոփոխություն:

## **Գրականության ցանկ**

1. «Համայնքի բյուջետային համակարգի մասին», 1997
2. Թումանյան Դ., 2010թ., «Ռազմավարական պլանավորում և համայնքի կապիտալ զարգացման ծրագրի կազմում: Ուսումնական նյութեր ՀՀ համայնքների համար», Նոյյան տապան, 85 էջ
3. Մովսիսյան Վ., Շահրազյան Վ., 2012 «Համայնքի բյուջեի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը (Երևան քաղաքի օրինակով)», Նոյյան Տապան, 44 էջ
4. Օրյան Է., 2000թ., «Տեղական ինքնակառավարման հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ», Պետական ծառայություն, 420 էջ
5. Рой О. М., 2006, “Система государственного и муниципального управления”, Питер, 301 с.
6. The World Bank: Farvacque-Vitkovich C., Kopanyi M., 2014, “Municipal Finances: A Handbook for Local Governments”, Green Press Initiative, 489 p.

**Gohar AGHAJANYAN**

**Mechanisms for increasing the efficiency of local expenditure management**

*Key words:* community budget, expenditure management system, revenue forecasting, delegated powers

The article discusses the international experience of implementation of local expenditure management system, its components, the need for an effective expenditure concept, the procedure for implementing an expenditure policy in the communities of the Republic of Armenia. The share of municipal budget expenditures in public expenditures has been analyzed to determine the degree of the powers delegated to the local self-government bodies by the state authorities, the regression model that represents the relationship between the local revenue realization percentage and local expenditure realization percentage, has been developed. As a result of the analysis, a number of proposals has been made for implementation of local expenditure management system in RA.

**Գոհար ԱՂԱՋԱՆՅԱՆ**

**Համայնքի բյուջեի ծախսերի կառավարման արդյունավետության  
բարձրացման մեխանիզմները**

*Բանալի բառեր. համայնքների բյուջե, ծախսերի կառավարման համակարգ,  
եկամուտների կանխագետում, լիազորությունների ապակենուրոնացում*

Հոդվածում ուսումնասիրվել են ծախսերի կառավարման համակարգի ներդրման միջազգային փորձը, դրա բաղկացուցիչները, ծախսերի արդյունավետ կառավարման հայեցակարգի անհրաժեշտությունը, << համայնքներում ծախսային քաղաքականության իրականացման կարգը: Վերլուծության են ենթարկվել համայնքների բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը հանրային ծախսերում՝ որոշելու համար լիազորությունների ապակենուրոնացման աստիճանը ՏԻՄ-երի և պետական կառավարման մարմինների միջև, կազմվել է ռեգրեսիոն մոդել, որը ներկայացնում է համայնքների բյուջեի եկամուտների կատարման տոկոսի և ծախսերի կատարման տոկոսի փոխկապվածությունը:

**Гоар АГАДЖАНЯН**

**Механизмы повышения эффективности управления местными расходами**

*Ключевые слова: бюджет сообщества, система управления расходами, прогнозирование доходов, делегированные полномочия*

В статье были рассмотрены международный опыт внедрения системы управления местными расходами, ее составляющие, необходимость эффективной концепции расходов, порядок реализации расходной политики в сообществах РА. Доля расходов муниципального бюджета в государственных расходах была проанализирована для определения степени полномочий, делегированных органам местного самоуправления органами государственной власти, была разработана регрессионная модель, которая представляет взаимосвязь между процентами реализации местных доходов и расходов. В результате анализа был внесен ряд предложений по внедрению системы управления местными расходами в РА.